«Նոր ժամանակի կրթություն ուն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Սովորողների մեջ համագործակցային կարողությունների ձևավորումը առարկայի դասավանդման գործընթացում:

Առարկան՝ Հայոց լեզու և գրականություն

Հետազոտող ուսուցիչ՝ Հովակիմյան Ժաննա

Ուսումնական հաստատություն՝ Ալավերդու թիվ 5 ավագ դպրոց

Երևան 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....3

ԻՆՉ Է ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ: ԻՆՉՈ՞Վ Է ԿԱՐԵՎՈՐՎՈՒՄ ԴՐԱ ԴԵՐԸ ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ .....

1. Համագործակցային կարողությունների ձևավորման դերը առարկայի դասավանդման գործընթացում 4

2. Համագործակցային ուսումնառության մեթոդով դասերի պլանավորում և համագործակցային ուսուցման մեթոդներ.....7

2.1 Համագործակցային ուսուցման մեթոդները..... 7

3. Համագործակցային կարողությունների ձևավորումը սովորողների մեջ 12

Փափուկ հմտություններ

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 15

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹԱՅՆ ՑԱՆԿ 16

ՀԱՎԵԼՎԱԾ.....17

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հանրակրթական դպրոցում աշխատելու երկարամյա փորձ ունեմ:Միշտ ինձ համար կարևոր է եղել գիտելիքներ հաղորդելը,սիրել եմ,երբ սովորողները լսել են ինձ անվերապահորեն ,հիմնականում դասից դուրս այնքան էլ չեմ հետաքրքրվել սովորողների հետաքրքրություններով,միմյանց հետ ունեցած նրանց անձնային հարաբերություններով;

Սակայն գնալով մի բայն այն չի ժամանակակից մարդկանց ժրջապատում,և գնալով ավելի ու ավելի եմ կարևորում դպրոցի ու ուսուցչի դերը սովորողների սոցիալականացման գործում: Վերջին տարիներին շատ եմ մտածում այն մասին,որ ժամանակակից աշխաչը չունի գիտելիքի պակաս,աշխարհն ունի մարդկային հարաբերությունների պակաս,ինչի ձևավորման մեջ էլ շատ մեծ է դպրոցի և ուսուցչի դերը:

Ժամանակակից աշխարհը անընդմեջ զարգանում է, որին զուգահեռ բարդանում է նորագույն աշխարհում կոմպետենտ և բազմակողմանի զարգացած, լայն աշխարհայացք ունեցող և աշխատաշուկայում մրցունակ սովորողներ պատրաստելու խնդիրը:

Ավանդական մեթոդները այլևս անկարող են նոր պահանջներին համապատասխան կարողությունների ձևավորմանը նպատակաուղղված արդյունքեր ապահովել:

Մեր երկրի կարևոր հարստություններից մեկը գիտական ներուժն է, որի ձևավորման պատասխանատվությունը կրում է նաև հանրակրթությունը, հետևաբար, ինչպես Հայաստանում, այնպես էլ ամբողջ աշխարհում, անհրաժեշտ են դասավանդման և ուսուցման նոր մոտեցումներ:

Մեր օրերում շատ կարևոր է գիտելիքների համատեղ մշակման, յուրացման և կիրառման հմտությունների ձեռքբերումը և կարողությունների զարգացումը: Դա իր հերթին ենթադրում է սովորողների արդյունավետ համագործակցություն առաջարկվող նորագույն մեթոդներով, որոնք ուսուցման գործընթացում շեշտը դնում են աշակերտ-աշակերտ համագործակցության վրա՝ նախկին ուսուցչակենտրոն մոտեցման փոխարեն: Պատրաստի նյութը ստանալու փոխարեն աշակերտին տրվում է սովորելու գործընթացը ինքնուրույն կազմակերպելու հնարավորություն: Այսպիսով՝ ուսուցման նպատակն է դառնում սովորել սովորեցնել, որին էլ էապես նպաստում է համագործակցային ուսուցումը, ինչով էլ պայմանավորված է տվյալ նյութի արդիականությունը:

Համագործակցային ուսումնառության բոլոր մեթոդների համար էլ ընդհանուր է այն գաղափարը, որ ուսումնառուները համագործակցում են, որ միասին սովորեն և պատասխանատու են ինչպես իրենց, այնպես էլ իրենց թիմակիցների ուսումնառության համար:

Հետազոտական աշխատանքի ***նպատակն է*** ուսումնասիրել համագործակցային

կարողությունների ձևավորմանն ուղղված ռազմավարությունները տվյալ առարկայի դասավանդման գործընթացում: Վերը նշված նպատակից ելնելով՝ աշխատանքի ***խնդիրներն են.***

- Ուսումնասիրել համագործակցային ուսուցման կարևորությունը,
- առավելությունները և առանձնահատկությունները:
- ուսումնասիրել համագործակցային ուսուցման մեթոդները
- բացահայտել սովորողների մեջ համագործակցային կարողությունների և հմտությունների ձևավորմանն ուղղված անհատական մոտեցումները. **փափուկ հմտությունների** դերը համագործակցային ուսուցման գործընթացում

Ի՞նչ է համագործակցային ուսուցումը: Ինչո՞վ է կարևորվում դրա դերը առարկայի դասավանդման գործընթացում:

1. Համագործակցային կարողությունների ձևավորման դերը առարկայի դասավանդման գործընթացում:

Համագործակցային ուսուցումը այլընտրանքային մանկավարժական մոտեցում է, որը ենթադրում է խմբային աշխատանքի համագործակցության նոր մշակույթ:

Համագործակցային ուսուցման ընթացքում խմբի յուրաքանչյուր անդամ կամ ամբողջ դասարանը ակտիվորեն ներգրավված են ուսուցման մեջ, իսկ նոր գիտելիքը մշակվում ու յուրացվում է հենց աշակերտների միջոցով:

Համագործակցային ուսուցման ընթացքում կարևորվում է ոչ միայն ակադեմիական գիտելիքների և հմտությունների ձեռքբերումը, այլև խմբային գործընթացի մշակման միջոցով հմուտ համագործակցողների, ակտիվ կիրառողների, մտածողության հմտություններ կիրառողների ձևավորելը: Համագործակցային ուսուցումը մեծացնում է նաև սովորողների ինքնուրույնությունը և պատասխանատվությունը:

Ֆրանսիացի մանկավարժ Սելեստեն Ֆրենեն ինչպես իր գործունեության, այնպես էլ մանկավարժական տեսության մեջ շեշտում է համագործակցային ուսուցման անհրաժեշտությունը: Իրենց կատարած հետազոտությունների արդյունքները աշակերտները ներկայացնում են իրենց ընկերներին, միասին խմբագրում, սրբագրում և ապա տպում իրենց պարբերականը:

Ֆրենեն այդ համագործակցությունը դուրս էր հանում դասարանից և նույնիսկ դպրոցից և փորձում էր այն տարածել հասակակիցների խմբերի մեջ այլ դպրոցներում, նույնիսկ քաղաքներում՝ ստեղծելով իրական գլոբալ համագործակցություն: Այս համագործակցության մի անդամ է հանդիսանում նաև ուսուցիչը, որը մասնակցում է նրանց քննարկումներին և օգնում նրանց գնահատել իրար:

Համագործակցությունը ընկալվում է նաև որպես ինքնաշտկման հզոր գործիք, երբ ուղղելով իր իսկ սխալները, աշակերտը սովորում է քերականություն, խոսքի վարպետություն, քննադատական մտածողություն:

Համագործակցային մանկավարժության նպատակն այնպիսի մեթոդների կիրառումն է, որոնք ուսման գործընթացը վերածում են սոցիալական շփման: Հիմնական իմաստն աշակերտների՝ որպես գործընկերների խմբի համագործակցությունն է:

Բացի գիտելիք փոխանցելուց, այս եղանակը նպատակ է հետապնդում զարգացնել աշակերտի՝ խնդիրներ լուծելու և համագործակցելու կարողությունները:

Այս դեպքում ուսուցիչը կատարում է համակարգողի կամ խորհրդատուի դեր: Խնդիրների լուծման վրա հիմնված ուսուցումն աշակերտներին սովորեցնում է, թե ինչպես է պետք սովորել: Աշակերտները սովորում են խմբի անդամների հետ համագործակցությամբ՝ առավելագույնս արդյունավետ համակարգել իրենց ուսման գործընթացը: Այս մեթոդի հիմնական իմաստն այն է, որ աշակերտի կարողություններն օգտագործվում են ոչ թե պատրաստի գիտելիք տրամադրելու, այլ գիտելիք քաղելու նպատակով: Այն դասարաններում, որտեղ աշակերտներն այս մեթոդն են կիրառում, նրանք հասկանում են, թե ինչպես է ուսումը դառնում գիտելիքի որոնման գործընթաց: Աշակերտների մոտ ձևավորվում է քննադատական մտածելակերպ, որն իրենց հնարավորություն է տալիս ձեռք բերվող տեղեկությունները փոխկապակցել այն նպատակի հետ, որի իրականացման համար կարող են օգտագործվել այդ տեղեկությունները :

Ուսուցումը պետք է ուղղված լինի բոլոր սովորողների ներքին հնարավորությունների բացահայտմանն ու զարգացմանը, ընդհուպ մինչև հատուկ կարիքներ ունեցող երեխաների համար: Ուսուցումը պետք է դառնա հաճույք երեխայի համար և նպաստի նրա զարգացմանը:

Համագործակցային մեթոդների կիրառումն ինքնանպատակ չէ. դրանք պետք է ուղղված լինեն սովորողների ինչպես մտավոր ու զգայական կարողությունների, այնպես էլ ինքնուրույնության,սոցիալականացման և այլ հմտությունների զարգացմանը: Մեթոդի ընտրության վրա կարող են ազդել՝ ուսուցման նպատակները և խնդիրները,

- նյութի բովանդակությունը,
- ուսումնական նյութի ծավալը և բարդությունը,
- նոր գիտելիք ձեռք բերելու նկատմամբ աշակերտների
- շահագրգռվածությունը և համագործակցային հմտությունների մակարդակը, աշակերտների տարիքային առանձնահատկությունները,
- ուսումնական ժամաքանակը,
- ուսուցման նյութատեխնիկական պայմանները,
- ուսուցիչ -աշակերտ փոխհարաբերությունները,
- աշակերտների թվաքանակը դասարանում,
- ուսուցչի պատրաստվածության մակարդակը [5] և այլն:

- Համագործակցային ուսուցման արդյունավետության համար շատ կարևոր է ուսուցչի դասի պլանավորման նախապատրաստական աշխատանքների գրագետ կազմակերպումը: Այն ուսուցչից պահանջում է՝ հիմնավորել տվյալ դասը համագործակցային խմբերով

- կազմակերպելու անհրաժեշտությունը, որոշել համապատասխան խմբեր կազմելու սկզբունքները, ձևերը,

- նախապատրաստել անհրաժեշտ բաշխիչ նյութեր,

- ձևակերպել նպատակներին համապատասխան առաջադրանքներ,

- ձևակերպել առաջադրանքների կատարման հստակ հրահանգներ,

- որոշել հանձնարարությունների համապատասխան ծավալ:

- Դասի կազմակերպման ժամանակ ուսուցչի հիմնական աշխատանքը կլինի բոլոր խմբերի աշխատանքների վերահսկումն ու ուղղորդումը:

Յուրաքանչյուր մեթոդի կիրառման նպատակները խիստ բազմազան են, ինչը ենթադրում է նաև, նպատակից կախված, մեթոդի ձևափոխման հնարավորություն: Ցանկացած դաս և դասարան եզակի է, ուստի ուսուցչի վարպետության ցուցանիշներից մեկը նպատակին համապատասխան մեթոդի ընտրությունն է:

Համագործակցային ուսուցման առավելությունները Համագործակցային մեթոդները մեծ ներուժ ունեն աշակերտակենտրոն ուսուցում կազմակերպելու համար, ինչը ևս կրթական բարեփոխումների կարևոր պահանջներից է: Համագործակցային մեթոդները թույլ են տալիս առավել արդյունավետ յուրացնել նոր նյութը, զարգացնել ինքնուրույնության, համագործակցային, հետազոտական աշխատանք կատարելու բազում հմտություններ, օրինակ՝ տեղեկույթի որոնման, հավաքման, մշակման և այլն: Սակայն այդ հմտությունների ձեռքբերումը սովորողների կողմից երկարատև աշխատանքի արդյունք է, իսկ ուսուցչին հնարավորություն է տալիս կատարելագործել, հարստացնել իր մեթոդական մոտեցումները տարբեր խնդիրների լուծման ժամանակ:

Ներկայումս գոյություն ունեն համագործակցային ուսուցման տարբեր մեթոդներ, որոնցից մի քանիսը՝ հաջորդիվ.

2.Համագործակցային ուսումնառության մեթոդով դասերի պլանավորում և համագործակցային ուսուցման մեթոդներ

Մեթոդները ուսուցման գործընթացի բաղադրամասերն են, որոնք օգնում են իրագործել ուսուցման նպատակը, խնդիրները, բովանդակությունը, սովորողների համակողմանի և ներդաշնակ զարգացումը:

Հանդիսանալով ուսուցման գործընթացի միջուկը՝ մեթոդը իրար է կապում ուսուցման է նախապես պլանավորած նպատակը և վերջնական արդյունքը:

Համագործակցային ուսումնառության մեթոդով վարվող դասերի նախապատրաստումը տարբերվում է դասերի այլ տեսակների պլանավորումից: Այն պահանջում է առանձնահատուկ մոտեցում և մի շարք մասնագիտական հմտություններ, որոնցից մի քանիսը ներկայացված են ստորև:

2.1 Համագործակցային ուսուցման մեթոդները՝

- ***Աշակերտների թիմային առաջադիմություն***
- ***Խճանկար***
- ***Շրջագայություն պատկերասրահում***
- ***Խմբային հետազոտության մեթոդները***
- ***Կառուցվածքային մոտեցում***

Աշակերտների թիմային առաջադիմության խմբավորումներ

Համագործակցային ուսուցման այս մեթոդը մշակվել է պրոֆեսոր Ռոբերտ Սլավինի կողմից: Աշակերտների թիմային առաջադիմության մեթոդը համարվում է առավել հեշտ մեթոդներից մեկը և օգտակար է այն ուսուցիչների համար, որոնք նոր են սկսում կիրառել համագործակցային ուսուցման մեթոդները: Այս մեթոդը խթանում է համագործակցությունը և մասնակցությունը: Կիրառվում է գնահատման այնպիսի համակարգ, որի պարագայում աշակերտը շահագրգռված է ոչ միայն իր, այլև խմբի բոլոր անդամների ուսումնառությամբ: Դաս-դասարանային ավանդական մեթոդով նոր թեման բացատրելուց հետո դասարանը բաժանվում է 4-5 հոգանոց խմբերի: Յուրաքանչյուր խմբում ընդգրկվում են գերազանց,միջին և ցածր առաջադիմությամբ աշակերտները: Հնարավորության դեպքում խմբերում ապահովվում են տղա-աղջիկ հավասարությունը: Խմբային այսպիսի ձևավորումը կոչվում է տարասեռ:

Խմբերին տրվում է նոր թեմային առնչվող հանձնարարություն: Նշվում է, որ հանձնարարության կատարումը համարվում է ավարտված, երբ խմբի յուրաքանչյուր անդամ յուրացնում է նյութը: Ապա ստուգվում է նյութի յուրացման աստիճանը:

Այս ընթացքում թիմի անդամներն այլևս չեն կարող օգնել միմյանց: Յուրաքանչյուրն ինքնուրույն է կատարում առաջադրանքը: Առաջադրանքի գնահատման համակարգն

այնպիսին է, որ յուրաքանչյուր աշակերտ իր գնահատականով ներդրում է ունենում խմբի ընդհանուր ցուցանիշում: Համագործակցային ուսուցման այս մեթոդը խթանում է աշակերտների ուսումնառությունը: Այստեղ գնահատվում է ինչպես աշակերտի, այնպես էլ խմբի առաջադիմությունը:

Խճանկար (Ջիգսո)

Խճանկարը համագործակցային ուսուցման մեթոդ է, որի կիրառության ժամանակ աշակերտները խորանում են նյութի որոշակի ասպեկտի մեջ: Խճանկարն ունի հետևյալ փուլերը՝

1. *Նյութի ուսումնասիրություն և տեղեկատվության հավաքում* - երբ աշակերտները բաժանվում են հենակետային խմբերի: Խմբի յուրաքանչյուր անդամ դառնում է որևէ ենթաթեմայի ‹‹փորձագետ››: Փորձագետները ուսումնասիրում են իրենց ենթաթեման, հավաքում տեղեկատվություն:
2. *Աշխատանք փորձագիտական խմբում*-փորձագիտական խմբերի աշակերտները համեմատում և հարստացնում են իրենց նյութերը:
3. *Աշխատանք ուսումնական խմբում*-յուրաքանչյուր փորձագետ հենակետային խմբի մյուս անդամներին սովորեցնում է իր ենթաթեման:
4. *Ավարտական աշխատանք*-աշակերտներն անհատական ստուգողական են հանձնում ամբողջ թեմայից:
5. *Ամփոփում*-արդյունքներն ամփոփվում են ըստ անհատական և խմբային ցուցանիշների:

Շրջագայություն պատկերասրահում

Սա ‹‹Խճանկար›› մեթոդի տարատեսակ է, որի նպատակն է փոխանակել տեղեկություններ, մշակել գաղափարներ և կատարել անդրադարձ, ինչպես նաև զարգացնել լսելու, ինքնուրույն աշխատելու, քննադատաբար և ստեղծագործաբար մտածելու, ցածրաձայն խոսելու, աշխատանքի արդյունքը ներկայացնելու հմտություններ: Այս մեթոդով խմբեր կազմելու ձևը կոչվում է համասեռ:

1. Ուսուցիչն ուսումնական նյութը կամ առաջադրանքը բաժանում է 4-6 մասի և յուրաքանչյուր խմբին տալիս է դրանցից մեկը՝ ուսումնասիրելու: Խմբերի թիվը կարող է մեծ լինել նյութի մասերի թվից: Այս դեպքում նյութի նույն մասը կուսումնասիրի երկու խումբ:
2. Չորս հոգուց բաղկացած խմբերն աշխատում են ընտրված մասերի վրա և ստեղծում նկար, կոլաժ, աղյուսակ, դիագրամ և այլն:
3. Պատրաստի աշխատանքները փակցվում են պատերին՝ ստեղծելով ‹‹պատկերասրահ››:
4. Խմբերի ներսում աշակերտները հաշվում են մինչև 4-ը և կազմում 4 նոր խումբ՝ ըստ իրենց համարների:
5. Այս նոր խմբերը շրջում են պատկերասրահում՝ կանգ առնելով յուրաքանչյուր ցուցանմուշի մոտ,և տվյալ խմբի այն անդամը, ով մասնակցել է այդ ցուցանմուշի ստեղծմանը, մանրամասն ներկայացնում է աշխատանքը, պատասխանում հարցերին և մասնակիցների առաջարկությունների համաձայն՝ կատարում լրացումներ, ուղղումներ: Շրջագայությունն ավարտվում է, երբ բոլոր խմբերը ծանոթանում են բոլոր աշխատանքներին:
6. Պատկերասրահում շրջագայությունից հետո հիմնական խմբերն իրենց աշխատանքները նորից քննության են ենթարկում՝ այս անգամ արդեն համաեմատելով մյուս աշխատանքների հետ և վերլուծելով առաջացած հարցերը: Կրտսեր տարիքի աշակերտների հետ աշխատելիս խմբերին կարելի է տալ նույն առաջադրանքը կամ խնդիրը: Աշխատանքը վերջացնելուց հետո, համեմատելով մյուս խմբերի հետ, աշակերտները հետադարձ կապ են ապահովում:

Խմբային հետազոտության մեթոդ

Խմբային հետազոտության մեթոդի կիրառման ընթացքում աշակերտները խմբով աշխատում են կոնկրետ խնդրի վրա: Համագործակցային ուսուցման մյուս մեթոդների նման խմբային հետազոտությունը հիմնվում է աշակերտների փոխօգնության և համագործակցության վրա: Ի տարբերություն մյուս մեթոդների՝խմբային հետազոտության մյուս հիմնական նպատակը կոնկրետ խնդրի ուսումնասիրությունն է:

Մեթոդի էությունը հետևյալն է.

Ուսուցիչը դասարանը բաժանում է 5 կամ 6 անդամ ունեցող խմբերի: Վերջիններս թեմաներ են ընտրում իրենց ուսումնասիրության համար, աշխատում, այնուհետև զեկույց են պատրաստում ու ներկայացնում ամբողջ դասարանին: Մեթոդի հեղինակներ Ծարանը և նրա գործընկերներն առանձնացնում են խմբային հետազոտության հետևյալ վեց քայլերը [Ս. Վարդումյան, Ա. Հովհաննիսյան, Գ. Վարելլա 2003: 179].

1. **Թեմայի ընտրություն:** Սովորողներն ուսուցչի կողմից հանձնարարված ընդհանուր խնդրի շրջանակներում առանձին ենթաթեմաներ են ընտրում:

2. **Համատեղ պլանավորում:** Սովորողները պլանավորում են առաջադրանքներն ու նպատակները:
3. **Իրագործում:** Սովորողները իրագործում են մշակված ծրագիրը:
4. **Վերլուծություն և համադրում:** Սովորողները վերլուծում և գնահատում են իրենց ձեռք բերած տեղեկատվությունը:
5. **Վերջնական արդյունքի ներկայացում:**
6. **Գնահատում:** Սովորողներն ու ուսուցիչը գնահատում են յուրաքանչյուր խմբի ներդրումը ամբողջ դասարանի աշխատանքի արդյունքում:

Կիրառելով խմբային հետազոտության մեթոդը՝ ուսուցիչը կարող է հետապնդել երեք փոխկապակցված նպատակ՝

1. Խմբային հետազոտությունը աշակերտներին սովորեցնում է համակարգված և վերլուծականորեն հետազոտել կոնկրետ խնդիրները:
2. Աշակերտները խորությամբ են յուրացնում ուսումնական նյութի բովանդակությունը:
3. Աշակերտները սովորում են համագործակցել՝ խնդիրը հետազոտելու ընթացքում:

Այսպիսով՝ աշակերտները յուրացնում են բովանդակությունը, զարգացնում են հետազոտելու և համագործակցային աշխատանքի հմտություններ:

Կառուցվածքային մոտեցում

Այս մոտեցումը, որը մշակվել է Սպենսեր Կագանի կողմից, ընդգծում է աշակերտների միջև շփման ձևերի վրա ազդող կառույցների կիրառումը: Այս կառույցներն աշակերտներին պարտադրում են աշխատել փոքր խմբերով, փոխկախվածության պայմաններում և անահատականացված խրախուսանքի փոխարեն սովորոբար պարգևի են արժանանում համագործակցային աշխատանքը: Ստորև ներկայացնենք այդպիսի կառույցների մի քանի օրինակներ.

‹‹Մտածի՛ր-զույգ կազմի՛ր- գաղափարներդ կիսի՛ր››

Այս մեթոդն առաջացել է համագործակցային ուսումնառությանը և սպասման ժամանակին առնչվող հետազոտությունների արդյունքում: Այն ներառում է 3 փուլ: Ենթադրենք՝ ուսուցիչը ներկայացրել է մի կարճ զեկույց-դասախոսություն կամ աշակերտներն ավարտել են առաջադրանքի ընթերցումը: Այժմ ուսուցիչը ցանկանում է, որ աշակերտներն առավել հանգամանալից և համակողմանի քննության առնեն հենց նոր բացատրված կամ յուրացրած նյութը: Այդ նպատակով նա խմբային հարցուպատասխանի փոխարեն նախապատվությունը տալիս է ‹‹մտածի՛ր-զույգ կազմի՛ր- գաղափարներդ կիսի՛ր›› ռազմավարությանը, որը ներառում է հետևյալ հաջորդական քայլերը.

Քայլ 1-ին. ‹‹Մտածի՛ր››: Ուսուցիչը դասի թեմային առնչվող հարց է արծարծում և աշակերտներին հանձնարարում մեկ րոպե լուռ մտածել պատասխանի մասին:

Քայլ 2-րդ. ‹‹Զույգ կազմի՛ր››: Ուսուցիչն աշակերտներին հանձնարարում է զույգեր կազմել և քննարկել, թե ինչ էին մտածում /4-5 րոպե/:

Քայլ 3-րդ. ‹‹Գաղափարներդ կիսի՛ր››: Այժմ զույգերն ամբողջ դասարանի հետ են կիսում իրենց քննարկման արդյունքները: Ուսուցիչը տարբեր զույգերի է հրավիրում և քննարկումը շարունակում այնքան ժամանակ, մինչև խոսելու և սեփական կարծիքը մյուսներին ներկայացնելու հնարավորությունից օգտվեն մասնակիցների կեսից ավելին:

Համագործակցային մեթոդներից են նաև Պրիզմայի մեթոդը, Վեննի դիագրամը, Տ-աձև աղյուսակը և մի շարք այլ մեթոդներ:

Պրիզմայի մեթոդը խրախուսում է սովորողներին ազատ ու անկաշկանդ մտածել որևէ թեմայի շուրջ: Պրիզմայի հիմնական նպատակը ներկայացվող երևույթի, հասկացության, գաղափարի վերաբերյալ ենթագիտակցական ոլորտում եղած ասոցիատիվ կապերի վերհանումն ու արձանագրումն է:

Պրիզմա մեթոդը կիրառվում է բացառապես դասի սկբնական, խթանման փուլում՝ ապահովելով սովորողների ակտիվությունն ու հետաքրքրությունը, կապ հաստատելով սովորողների ունեցած գիտելիքների ու պատկերացումների և ուսուցանվող նոր նյութի միջև: Այս մեթոդի կիրառումը շատ ժամանակ չի խլում, այն անցնում է շատ արագ և աշխույժ:



Վեննի դիագրամը կառուցվում է երկու շրջանագծով, որոնք ունեն հատման մակերես: Այդ դիագրամը կարելի է օգտագործել գաղափարները միմյանց հակադրելու, կամ ընդհանրությունները ընդգծելու համար:



Т-աձև աղյուսակը օգտագործվում էմիևնույն հասկացության, խնդրի երկու կողմերը համեմատելու համար: Սա գծագրական դասակարգիչներից ամենապարզն է և կազմակերպման ձևով, և կառուցվածքով: Այս մեթոդը արդյունավետ է դասի տարբեր փուլերում, տարբեր նյութեր ուսումնասիրելիս:

Դրական կողմեր	Բացասական կողմեր



3.Համագործակցային կարողությունների ձևավորումը սովորողների մեջ:

Փոխադարձ հմտություններ

Ուսուցչի աշխատանքը չի կարող սահմանափակվել միայն դասավանդվող նյութին համապատասխան մեթոդի ճիշտ ընտրությամբ: Այստեղ շատ կարևոր նրբություն է, նաև աշակերտների մոտ տվյալ մեթոդի կիրառման ճիշտ հմտություն ձևավորելը:

Համագործակցային մեթոդի կիրառման ժամանակ շեշտը պետք է դրվի սովորողների բարոյահոգեբանական կողմի զարգացման վրա: Աշակերտը պետք է գիտակցի թիմային աշխատանքի տարբերությունը անհատական աշխատանքից: Երեխայի մոտ պետք է ձևավորել ‹‹մեկը բոլորի, բոլորը մեկի համար›› սկզբունքը:

Համատեղ աշխատանքը թիմի ներսում պետք է ընկալվի ոչ թէ մրցակցություն, այլ համագործակցություն:

Խմբի անդամները աջակցում են, օգնում և խրախուսում են ՝ նպաստելով առաջադրանքի կատարմանը և գիտելիքների ձեռքբերմանը: Այն իր մեջ պետք է ներառի բացակա ընկերներին աջակցելը, անցած նյութը բացատրելը, տնային առաջադրանքները կատարելու հարցում օգնելը և այլն:

Համագործակցային ուսումնառության ընթացքում խմբի յուրաքանչյուր անդամ կամ ամբողջ դասարանը ակտիվորեն ներգրավված պետք է լինեն ուսուցանվող նյութի մեջ անկախ մտավոր կարողությունների և ընդունակությունների աստիճանից, սոցիալական դիրքից կամ ֆիզիկական կարգավիճակից:

Այս տեսանկյունից կարող ենք դիտարկել նաև **փափուկ հմտություններ** (անգլ.՝ soft skills) հասկացությունը, որը իրենից ներկայացնում է կարիերայի համար կարևոր, ոչ մասնագիտական վերմասնագիտական հմտություններ: Նման հմտությունները (կարողությունները) պատասխանատվություն են աշխատանքային գործընթացին ավելի հաջող մասնակցության համար, համընդգրկող են, այսինքն չեն ներառում միայն որոշակի ոլորտ:

Փափուկ հմտությունները ենթադրում են տվյալ գործունեության համար ցանկալի որակների զարգացում, որոնք կախված չեն միայն գիտելիքից, դրանք ընդգրկում են առողջ բանականությունը, մարդկանց հետ շփվելու, ինտեգրվելու կարողությունը, դրական վերաբերմունքը:

Ի հակադրություն մասնագիտական հմտությունների՝ փափուկ հմտուլթյունները սերտորեն կապված են անձնային բարձր որակների, կարգապահության, ինչպես նաև ՝ սոցիալական հմտությունների՝ լսելու կարողություն, թիմում աշխատելու ունակություն, էմոցիոնալ կառավարում, ժամանակիի կառավարում և այլն:

Այսինքն՝ համագործակցային կարողություններ ձևավորելու առանցքային նախապմաններից է մարդկային անձնային և ներանձնային որակների ձևավորումը, սեփական և այլ մարդկանց զգացմունքները կառավարելու ունակության ձևավորումը:

Առարկայի դասավանդման գործընթացում սովորողների մոտ համագործակցային կարողությունների ձևավորումը պետք է սկսել աշակերտներին փափուկ հմտութնուններ ուսուցանելով. Օրինակ՝

- կազմակերպում
- կառավարում
- թիմային աշխատանք
- էմոցիոնալ ինտելեկտ
- հանրային խոսք
- քննադատական մտածողություն
- ստեղծարարություն
- ադապտացվելու, ինտեգրվելու կարողություն
- ունկնդրելու ունակություն
- որոշում կայացնելու կարողություն
- պատասխանատվություն
- ժամանակի ճիշտ կառավարում

Ժամանակակից հասարակությանը անհրաժեշտ են կայուն անհատներ՝ զինված ոչ միայն մասնագիտական գիտելիքներով, այլև մարդկային բարձր որակներով:
Նմանօրինակ կարողությունների ձևավորման լավագույն միջավայրը դպրոցն է, հենց այստեղից պետք է սկսել կրթել գաղափարապես հասուն հասարակություն:
Տվյալ առարկայի դասավանդման գործընթացում կարելի է կիրառել համագործակցային ուսուցման գրեթե բոլոր մեթոդները:

Եզրակացություն

Այսպիսով կարող ենք եզրակացնել, որ դասավանդման ժամանակակից մեթոդների՝ մասնավորապես համագործակցային մեթոդի կիրառման նպատակն է դաստիարակել ինքնուրույն մտածող, ինքնադրսևորման, ինքնիրագործման պատրաստ անձ: Ժամանակակից հասարակությանը անհրաժեշտ են կայուն անհատներ՝ զինված ոչ միայն մասնագիտական գիտելիքներով, այլև մարդկային բարձր որակներով:

Համագործակցային մեթոդները մեծ ներուժ ունեն աշակերտակենտրոն ուսուցում կազմակերպելու համար, ինչը ևս կրթական բարեփոխումների կարևոր պահանջներից է: Համագործակցային մեթոդները թույլ են տալիս առավել արդյունավետ յուրացնել նոր նյութը, զարգացնել ինքնուրույնության, համագործակցային, հետազոտական աշխատանք կատարելու բազում հմտություններ ինչպես օրինակ համատեղ աշխատանքը թիմի ներսում ընկալվում է ոչ թէ մրցակցություն, այլ համագործակցություն: Խմբի անդամները աջակցում են, օգնում և խրախուսում են ՝ նպաստելով առաջադրանքի կատարմանը և գիտելիքների ձեռքբերմանը: Բացի գիտելիք փոխանցելուց, այս մեթդը միտված է զարգացնել աշակերտի՝ խնդիրներ լուծելու և համագործակցելու կարողությունները: Այս դեպքում ուսուցիչը կատարում է համակարգողի կամ խորհրդատուի դեր: Խնդիրների լուծման վրա հիմնված ուսուցումն աշակերտներին սովորեցնում է, թե ինչպես է պետք սովորել: Աշակերտները սովորում են խմբի անդամների հետ համագործակցությամբ՝ առավելագույնս արդյունավետ համակարգել իրենց ուսման գործընթացը: Այս մեթոդի հիմնական իմաստն այն է, որ աշակերտի կարողություններն օգտագործվում են ոչ թե պատրաստի գիտելիք տրամադրելու, այլ գիտելիք քաղելու նպատակով: Այն դասարաններում, որտեղ աշակերտներն այս մեթոդն են կիրառում, նրանք հասկանում են, թե ինչպես է ուսումը դառնում գիտելիքի որոնման գործընթաց: Աշակերտների մոտ ձևավորվում է քննադատական մտածելակերպ, որն իրենց հնարավորություն է տալիս ձեռք բերվող տեղեկությունները փոխկապակցել այն նպատակի հետ, որի իրականացման համար կարող են օգտագործվել այդ տեղեկությունները :

Այսինքն՝ համագործակցային կարողություններ ձևավորելու առանցքային նախապայմաններից է մարդկային անձնային և ներանձնային որակների ձևավորումը, սեփական և այլ մարդկանց զգացմունքները կառավարելու ունակության ձևավորումը: Առարկայի դասավանդման գործընթացում սովորողների մոտ համագործակցային կարողությունների ձևավորումը պետք է սկսել աշակերտներին փափուկ հմտութնուններ ուսուցանելով

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Հովհաննիսյան Ա. և ուրիշներ, Համագործակցային ուսուցումը Հայաստանում, Երևան, Անտարես, 2006:

2. Վարդումյան Ս.,Հովհաննիսյան Ա.,Վարելլա Գ., ժամանակակից մանկավարժական մոտեցումներ: Մասնագիտական զարգացում,Երևան,Նոյան Տապան,2003:

3. Современные технологии обучения. Методическое пособие по использованию интерактивных методов в обучении/ Под ред. Г.В. Борисовой, Т.Ю Аветовой и Л.И. Косовой.- “ Полиграф- С”, 2002

4. http://gspi.am/media/journal/2014n1b/37.pdf

5. http://shsu.am/media/journal/2019n1b/5.pdf

6. Ուսուցման արդյունավետ հնարներ https://library.fes.de/pdf-files/bueros/georgien/16023.pdf

7. https://ladyblog.am/post/business/marqeting/papuk-hmtutyunner-soft-skills

8. https://www.ahschool.com/blog/read-more/~board/blog/post/the-importance-of-soft-skills-in-education

9. https://znanio.ru/media/---2589165

10. https://www.dictionary.com/browse/soft-skills

ՀԱՎԵԼՎԱԾ

Սույն վերապատրաստման դասընթացի շրջանակներում Նորաբացի Մ. Ապելյանի անվան միջնակարգ դպրոցում կատարվել է հետազոտական աշխատանքի գործնական կիրառությունը 9-րդ դասարանում գրականություն առարկայից անցկացվել է <<Սասունցի Դավիթ>> թեմայով համագործակցային մեթոդի կիրառությամբ դաս: Ինչպես յուրաքանչյուր դասաժամ այս դասը ևս ուներ նպատակ. Այն էր վիպական կերպարների միջոցով ընկալել հայ ժողովրդի վեհ գաղափարները, սովորողներին մատնացույց անել հայրենասիրության օրինակները, բարձրացնել ազգային արժանապատվության գիտակցումը ինչպես նաև վերարտադրողական հմտությունների զարգացումը և աշխատանքի փառաբանումը:

Դասի ընթացքում օգտագործվել են դիդակտիկ միջոցներ՝ պաստառներ՝ էպոսի հերոսների տոհմածառը, նկարներ և այլն:

Առաջադրվել է 4 ճյուղերի հերոսների անունով ձևավորել 5 հոգանոց խմբեր:

Մինչ բուն դասին անցնելը ստեղծվել է միջառարկայական կապ պատմության և հայ մշակույթի հետ:

Համառոտ ներկայացվեց դարաշրջանը պատմական իրադարձությունները՝ արաբական լծի տակ հայ ժողովրդի վիճակը: Խոսվեց նաև հայ ժողովրդի ազգային հատկանիշներից: Համագործակցային խմբերի նպատակն էր՝ կարողանալ լսել մեկը մյուսին, հարգել դիմացինի կարծիքը, բացատրել իրենց քայլերը, հանգել եզրակացության: Վեր հանել էպոսի հիմնական գաղափարը, կերպարների վերլուծության միջոցով հիմնավորել հայրենասիրության իրենց գնահատումը:

Այնուհետև հանձնարարվեց գտնել յուրաքանչյուր ճյուղում հայ ժողովրդի առաքինությունների և դրական հատկությունների մեկական օրինակ (կազմել պաստառներ), ընթացքում իմ կողմից վերահսկվում էր խմբերի աշխատանքը, հետևում էի համագործակցության ընթացքին, ուշադրության տակ պահելով ակտիվ աշակերտներին, տալով անհատական գնահատում:

Այնուհետև յուրաքանչյուր խումբ ներկայացրեց իր աշխատանքը: Ներկայացնող աշակերտը ընտրված էր իմ կողմից, իսկ խմբի մյուս անդամները կատարում էին լրացումներ: Բոլոր խմբերին լսելուց հետո կատարվեց գնահատում ըստ իրենց

ներկայացրած աշխատանքի: Վերջում վիպերգից հիշեցին թևավոր խոսքեր և ժողովրդական ասացվածքներ:

Դասը ամփոփվեց միասնական կերպով և քննարկվեցին վերջնարդյունքները: